Արձանագրություն N 4

2026-2028 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (ինսուլինների) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» «Հոկտեմբերի» 2025թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ	Ա. Մկրտչյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 15.08.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 3-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի սեպտեմբերի 5-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	natalipharm@bk.ru	01222567
2	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	tender@mlnpharm.am	02567316
3	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@teopharma.am	00471216

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Նատալի Ֆարմ» և «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի հիվանդության և անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով հայտերի գնահատումը կասեցվել է և 19.09.2025թ. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ 5706-Ա հրամանով իրականացվել է նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմի փոփոխություն և սահմանվել է նոր կազմ, անփոփոխ թողնելով գնահատող հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածությունները, փոփոխելով քարտուղարին՝ Հասմիկ Սարգսյանի փոխարեն սահմանելով քարտուղար Արմինե Գալուստյանին:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 22.09.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ

«Հարգելի մասնակից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները հայտնում եմ, որ 2-րդ չափաբաժնի մասով, հաշվի առնելով, որ տվյալ չափաբաժնով առկա է գրանցամատյանում ՀՀ-ում գրանցված դեղ, հետևաբար անհրաժեշտ է շտկել՝ ներկայացնելով ՀՀ-ում գրանցված դեղ՝ հստակ նշելով ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: Շտկված տարբերակներն անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 22.09.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ

«Հարգելի մասնակից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները հայտնում եմ, որ 3, 4, 5 չափաբաժինների մասով՝ 1. Հաշվի առնելով, որ տվյալ չափաբաժնով առկա է գրանցամատյանում ՀՀ-ում գրանցված դեղ, հետևաբար անհրաժեշտ է շտկել՝ ներկայացնելով ՀՀ-ում գրանցված դեղ՝ հստակ նշելով ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: 4-չափաբաժնում առաջարկվում է ֆիրմային անվանումը շտկել: 2. Անհրաժեշտ է նաև ապահովել չգրանցված դեղերի համար պահանջվող, ինչպես նաև չգրանցված դեղեր ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկանքների ներկայացումը հրավերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Շտկված տարբերակներն անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»

Շտկման համար սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակիցների կողմից իրականացված շտկումները և գնահատող հանձնաժողովը գնահատելով շտկված փաստաթղթերը գնահատեց բավարար «Նատալի Ֆարմ» և «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 04.09.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:
2. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագրեր՝
   - «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, 1,833,120,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, 2,132,082,999.60 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ

սահմանել 15.10.2025թ.-ից մինչև 24.10.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Ա. Մկրտչյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Ա. Գալուստյան

2026-2028 թվականների կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով 04.09.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Նատալի Ֆարմ» ՍՊԸ					«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ուլտրաերկարատև կամ երկարատև ինսուլին	417,600	5,475.69	2,286,648,144	941,600,000	188,320,000.00	1,129,920,000.00	2,254.79	2,705.75	1,281,138,400	256,227,680	1,537,366,080	3,067.86	3,681.43
2	Ուկտրակարճ ինսուլին	259,200	4,950.00	1,283,040,000	586,000,000.00	117,200,000.00	703,200,000	2,260.80	2,712.96	635,040,000	127,008,000	762,048,000	2,450.00	2,940.00
3	Կարճատր ազդ ինսուլին	4,810,000	174.70	840,307,000			0.00	0.00	0.00	489,016,666.70	97,803,333.34	586,820,000.04	101.67	122.00
4	Միջին ազդ. Ինսուլին	10,550,000	167.86	1,770,923,000			0.00	0.00	0.00	1,178,083,333.00	235,616,666.60	1,413,699,999.60	111.67	134.00
5	Ինսուլին կարճատև և միջին ազդ. Խառնուրդ	1,207,000	174.70	210,862,900			0	0.00	0.00	109,635,833.30	21,927,166.66	131,562,999.96	90.83	109.00

2026-2028 թվականների կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով 04.09.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ուլտրաերկարատև կամ երկարատև ինսուլին	417,600	5,475.69	2,286,648,144					
2	Ուկտրակարճ ինսուլին	259,200	4,950.00	1,283,040,000					
3	Կարճատար ազդ ինսուլին	4,810,000	174.70	840,307,000	550,155,775	110,031,155.0	660,186,930.0	114.38	137.25
4	Միջին ազդ. Ինսուլին	10,550,000	167.86	1,770,923,000	1,312,783,975.35	262,556,795.07	1,575,340,770.42	124.43	149.32
5	Ինսուլին կարճատև և միջին ազդ. Խառնուրդ	1,207,000	174.70	210,862,900	156,158,642.50	31,231,728.50	187,390,371.0	129.38	155.25